

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՃՇՀԱՀ)**

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ**

<b>1. Մասնագիտության թվանիշը և անվանումը</b>	«073101.00.6 – Ճարտարապետություն»
<b>2. Կրթական ծրագրի թվանիշը և անվանումը</b>	«073101.01.6 – Ճարտարապետություն»
<b>3. Ծրագրի հավատարմագրումը</b>	—
<b>4. Շնորհվող որակավորումը</b>	Ճարտարապետության բակալավր
<b>5. Ուսումնառության հիմնական լեզուն</b>	Հայերեն
<b>6. Ուսուցման ձևը</b>	Առկա
<b>7. Ծրագրի ընդունելության պահանջները</b>	
Բակալավրի առկա ուսուցման ծրագրի համար - ՀՀ կառավարության 2021թ-ի ապրիլի 1-ի N469-Ն որոշում	
<b>8. Ծրագրի նպատակները</b>	
Ծրագրի նպատակն է. <ul style="list-style-type: none"> <li>• ապահովել բարձրորակ մասնագետներ տվյալ ոլորտում;</li> <li>• ներկայացնել նախագծային հիմունքների հիմնական ուղղությունները;</li> <li>• ներկայացնել ճարտարապետության և հարակից ոլորտների համընդհանուր կապը և ազդեցությունը միմյանց վրա;</li> <li>• պատասխանատվությամբ և էթիկական կանոններով մոտենալ մասնագիտական խնդիրների լուծմանը;</li> <li>• կարողանալ ինտեգրվել մասնագիտական ոլորտում թիմային աշխատանքներին:</li> </ul>	
<b>9. Ծրագրի կրթական վերջնարդյունքները</b>	
Կցվում է	
<b>10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները: Դասավանդման, ուսումնառության և գնահատման ձևերն ու մեթոդները</b>	
<b>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն.</b> Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն	<b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b> Ուսանողը ձեռք է բերում մասնագիտական գի-

<p>ունակ կլինի.</p> <p>Ա1. ճանաչել ճարտարապետական ստեղծագործության հիմքում ընկած գործընթացները, հայեցակարգերը և մշակութային արժեքների վերաբերյալ խորը գիտելիքները,</p> <p>Ա2. հավաքել հիմնարար գիտելիքներ նախագծման տեսության, մեթոդների և նախագծային տարբեր փուլերի հետ կապված գործառնությունների վերաբերյալ,</p> <p>Ա3. արտահայտել համաշխարհային և ազգային ճարտարապետության, քաղաքաշինության (տարածական պլանավորման), լանդշաֆտային ճարտարապետության, մշակութային ժառանգության պահպանության, արվեստի պատմության, տեսության և պրակտիկայի իմացություն,</p> <p>Ա4. սահմանել էկոլոգիական կայունության և բնական ու տեխնածին ազդեցություններից պաշտպանության իմացություն՝ հաշվի առնելով բնական աղետների առաջացման ռիսկերը,</p> <p>Ա5. նկարագրել ճարտարապետական պրակտիկային և ստեղծագործությանը բնորոշ հետազոտությունները և փորձերը՝ դիտարկելով ճարտարապետությունը որպես ստեղծագործական ուղղություն,</p> <p>Ա6. արտահայտել գիտելիքներն աշխատանքային նախագծերի, շինարարական արտադրության, կոնստրուկցիաների, շինանյութերի, շինարարության մեթոդների և կազմակերպման, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների, տեխնիկական սպասարկման և անվտանգության համակարգերի ոլորտներում,</p> <p>Ա7. ձևակերպել ճարտարապետության հետ հարակից ակադեմիական ոլորտների փոխազդեցությունները,</p> <p>Ա8. ներկայացնել, թե ինչպես է ճարտարապետությունը գործում որպես մասնագիտություն և որպես ստեղծարար արդյունաբերություն,</p> <p>Ա9. նկարագրել ճարտարապետությունը որպես մասնագիտության ֆինանսական,</p>	<p>տելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. նախագծային հարցադրումների համալիր լուծումների իրականացում,</li> <li>2. լսարանային աշխատանքի իրականացում,</li> <li>3. լաբորատոր և գործնական աշխատանքների կատարում,</li> <li>4. տեսական նյութերի յուրացում:</li> </ol> <p><b>Գնահատման մեթոդները</b></p> <p>Ուսանողի մասնագիտական գիտելիքը և իմացությունը գնահատվում են հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացված հաշվեգրաֆիկական կամ կուրսային աշխատանք/նախագիծ,</li> <li>2. ճարտարապետահատակագծային լուծումների հիմնավորվածությունն ու նախագծի մատուցման որակ,</li> <li>3. լսարանում կատարված առաջադրանքներ,</li> <li>4. փուլային ընթացիկ ատեստավորում:</li> </ol>
--	---

<p>գործարար և իրավական հիմնական ասպեկտներ,          Ա10. արտահայտել անալիտիկ և ինժեներական մտածելակերպ ստեղծագործական աշխատանքների մեջ:</p>	
<p><b>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</b>          Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Բ1. հետազոտել, մշակել և մեկնաբանել ոլորտին վերաբերող քանակական և որակական տվյալներ՝ տրամաբանական հիմնավորումներ, նախագծային ու շինարարական գործընթացների գնահատումներ իրականացնելու համար,</p> <p>Բ2. համատեղել մայրենի և առնվազն մեկ օտար լեզվով հաղորդակցվելու ունակությունը՝ նախագծերի, ինչպես նաև մասնագիտության ոլորտին առնչվող խնդիրների քննարկումների ժամանակ՝ տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր, և որոշումներ ներկայացնելու, բացատրելու կարողություն ինչպես մասնագետների, այնպես էլ հանրության առջև,</p> <p>Բ3. համատեղել նախագծի մշակման և նախագծային լուծումների ներկայացման գործընթացի կիրառումը, ինչպես ձեռքի աշխատանք, այնպես էլ էլեկտրոնային և գրաֆիկական մեթոդներ ներկայացնելու համար՝ օգտագործելով արդիական ծրագրային փաթեթներ,</p> <p>Բ4. գնահատել միջանձնային հաղորդակցման հմտությունները և էթիկական պարտավորությունները,</p> <p>Բ5. արժևորել ճարտարապետական ստեղծագործության վրա աշխատելիս ճարտարապետների, ինչպես նաև այլ ոլորտների մասնագետների հետ համատեղ աշխատելու ունակությունը և ապահովել արդյունավետ հաղորդակցում,</p> <p>Բ6. կիրառել իր ներդրումն գործողությունների կամ նախագծերի իրականացման և կառավարման գործում՝ լինելով բաց և հաղորդակցվող:</p>	<p><b>Դասավանդման և ուսումնառության մեթոդները</b>          Ուսանողը ձեռք է բերում մասնագիտական գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ինքնուրույն հետազոտության իրականացում,</li> <li>2. ինքնուրույն վերլուծական, դասակարգման և եզրահանգման աշխատանքների կատարում,</li> <li>3. նախագծային հարցադրումների համալիր լուծումների իրականացում,</li> <li>4. լսարանային աշխատանքի իրականացում,</li> <li>5. լաբորատոր և գործնական աշխատանքների կատարում,</li> <li>6. տեսական նյութերի յուրացում:</li> </ol> <p><b>Գնահատման մեթոդները</b>          Ուսանողի մասնագիտական գիտելիքը և իմացությունը գնահատվում են հետևյալ մեթոդներով.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացված հաշվեգրաֆիկական կամ կուրսային աշխատանք/նախագիծ,</li> <li>2. ճարտարապետահատակագծային լուծումների հիմնավորվածությունն ու նախագծի մատուցման որակ,</li> <li>3. լսարանում կատարված առաջադրանքներ,</li> <li>4. փուլային ընթացիկ ատեստավորում:</li> </ol>

**Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

Գ1. մեկնաբանել այն սոցիալական ենթատեքստի իմացությունը, որի շրջանակներում նախատեսվում է ձևավորել ճարտարապետական միջավայրը, հաշվի առնելով էրգոնոմիկայի և ծավալատարածական պահանջները, ինչպես նաև սոցիալական արդարությունը, բոլորի համար հասանելիությունը,

Գ2. համակարգել իր ճարտարապետական կրթության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները,

Գ3. ցուցաբերել իր ճարտարապետական ստեղծարար պրակտիկայում փորձարկումներ իրականացնելու և անկանխատեսելի իրավիճակների հաղթահարման ունակություն,

Գ4. համակարգել իր ճարտարապետական գիտելիքների զարգացման համար անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունն, ապահովել և կիրառել այդ գիտելիքները ստեղծարար ճարտարապետական նախագծման գործընթացներում,

Գ5. սինթեզել քննադատական ձևակերպման, ստեղծագործական մշակման և իր սեփական ճարտարապետական հայեցակարգերը, տարածական ձևերի առաջադեմ հմտությունները,

Գ6. օգտագործելով հիմնարար, արդիական և նորարարական մեթոդներ՝ ձևակերպել և պլանավորել մասնագիտական գործունեության տարբեր փուլերի գործընթացները՝ հիմնվելով քաղաքաշինության, ճարտարապետության, շինարարության, անվտանգության տեխնիկայի և շահագործման իրավական ակտերի, ինչպես նաև նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների վրա,

Գ7. դասակարգել օբյեկտների գործառական նշանակության ու մասշտաբի, մարդկանց և կառույցների, շրջակա միջավայրի միջև առկա կապերը:

**Դասավանդման և ուսումնառության մեթոդները**

Ուսանողը ձեռք է բերում մասնագիտական գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով.

1. ինքնուրույն հետազոտության իրականացում,
2. ինքնուրույն վերլուծական, դասակարգման և եզրահանգման աշխատանքների կատարում,
3. նախագծային հարցադրումների համալիր լուծումների իրականացում,
4. լսարանային աշխատանքի իրականացում,
5. լաբորատոր և գործնական աշխատանքների կատարում,
6. տեսական նյութերի յուրացում,
7. լրացուցիչ մասնագիտական հանդիպումներով փորձի փոխանակում,
8. լրացուցիչ ֆակուլտատիվների և աշխատարանների միջոցով մասնագիտական փորձի հարստացում:

**Գնահատման մեթոդները**

Ուսանողի մասնագիտական գիտելիքը և իմացությունը գնահատվում են հետևյալ մեթոդներով.

1. ներկայացված հաշվեգրաֆիկական կամ կուրսային աշխատանք/նախագիծ,
2. ճարտարապետահատակագծային լուծումների հիմնավորվածությունն ու նախագծի մատուցման որակ,
3. լսարանում կատարված առաջադրանքներ,
4. փուլային ընթացիկ ատեստավորում:

### 11. Ծրագրի ուսումնական պլանը

Կցվում է

### 12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցվում է

### 13. Գնահատման ձևերը

Ուսանողի կրթական գործառնություններն ու գործընթացները գնահատում է դասավանդող դասախոսը կամ հանձնաժողովը: Ուսանողի լսարանային և ինքնուրույն աշխատանքը գնահատվում է դասընթացի ծրագրում հաստատված գնահատման համակարգով: Կիրառվում է ուսանողի աշխատանքի փուլային գնահատման սկզբունքը՝ կատարվող աշխատանքի ընթացքը հսկելու նպատակով:

Ուսումնառության ընթացքում ուսանողները իրականացնում են հետևյալ գործառնությունները՝

- ա) տեսական աշխատանքի վերլուծություն և հիմնավորում,
- բ) գործնական առաջադրանքներ,
- գ) լաբորատոր աշխատանքների կատարում,
- դ) կուրսային աշխատանք/նախագիծ,
- ե) ինքնուրույն աշխատանքներ,
- զ) ավարտական աշխատանքի փուլային ատեստավորումներ,
- է) պրակտիկա,
- ը) ավարտական աշխատանքի պատրաստում և պաշտպանություն:

Դասընթացի ծրագրով նախատեսված բաղադրիչների արդյունքների գնահատման համար կիրառվում է 20 միավորային սանդղակ՝ ըստ ներքոհիշյալ աղյուսակի.

Գնահատման ընդհանուր միավորը	Գնահատականը
18-20	5 (գերազանց)
14-17	4 (լավ)
8-13	3 (բավարար)
0-7	2 (անբավարար)

«Գերազանց» գնահատվում է առարկայական ծրագրի լիարժեք իմացությունը և նախագծի ամբողջական իրականացումը,

«Լավ» գնահատվում է առարկայական ծրագրի ոչ լիարժեք իմացությունը և նախագծի ոչ ամբողջական իրականացումը,

«Բավարար» գնահատվում է առարկայական ծրագրի մասնակի իմացությունը և նախագծի մասնակի իրականացումը,

«Անբավարար» գնահատվում է առարկայական ծրագրի թերի իմացությունը և նախագծի անբավարար իրականացումը:

### 14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

Ուսումը ավարտելուն պես և բակալավրի կոչում ստանալով, շրջանավարտները հնարավորություն ունեն անցնել աշխատանքի յուրաքանչյուր նախագծային կազմակերպություն, ձևավորելու իրենց մասնագիտական ուղին, ինչպես նաև շարունակել ուսումնառությունը մագիստրատուրայում:

Հինգ տարվա աշխատանքային փորձ ձեռք բերելու արդյունքում, ճարտարապետների պալատում հանձնելով լրացուցիչ քննություն կարող են ստանալ անհատական արտոնագիր և հիմնել սեփական նախագծային կազմակերպությունը:

### **15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը**

Ի լրումն հիմնական կրթական ծրագրի, ֆակուլտետում պարբերական սկզբունքով իրականացվում են. լրացուցիչ մասնագիտական հանդիպումներ արտաբուհական գործող ճարտարապետների և այլ ոլորտների մասնագետների հետ, ապահովելով բազմապրոֆիլ կրթություն և կապ գործող մասնագետների հետ:

Ամեն կիսամյակ Ֆակուլտետն իրականացնում է նաև տեղական և միջազգային նշանակության մասնագիտական աշխատանքներ, հրավիրելով մասնագիտական թեմաների շուրջ տեղացի և արտասահմանցի ուսանողների:

Նաև պարբերական սկզբունքով իրականացվում են ֆակուլտատիվներ և լրացուցիչ դասալսումներ:

### **16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս**

Կրթական ծրագրի մշակումը իրականացվել է ՀՀ Որակավորումների Ազգային Շրջանակի (ՈԱՇ) և ARMENQA-ի նկարագրիչներում սահմանված չափորոշիչների ու կողմնորոշիչների հիման վրա: Մասնագիտական առարկաների ծրագրերը մշակվել են ճարտարապետության ֆակուլտետի երեք թողարկող ամբիոնների կրթական ծրագրերի վերջնարդյունքներին համապատասխան:

### **17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ**

Ծրագիրը կոչված է ապահովել ճարտարապետական կրթության հնարավորինս լիարժեք իրականացումը և պատրաստել բարձրորակ մասնագետների:

		Կրթական ծրագրի վերջնարդյունքները	Ազգային շրջանակի նկարագրիչները
Որակավորման ընդհանուր նկարագիրը (բնորոշումը)		<i>Ճարտարապետության բակալավրի որակավորման աստիճան է շնորհվում անձանց, ովքեր ունեն համակողմանի և համակարգված գիտելիք, հմտություններ և կարողություններ ճարտարապետության և հարակից ոլորտներում մասնագիտական աշխատանք կատարելու և/կամ ուսումը շարունակելու համար:</i>	
Գ Ի Տ Ե Լ Ի Ք	1.Գիտելիք և իմացություն	<p><b>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն.</b> Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Ա1. ճանաչել ճարտարապետական ստեղծագործության հիմքում ընկած գործընթացները, հայեցակարգերը և մշակութային արժեքների վերաբերյալ խորը գիտելիքները,</p> <p>Ա2. հավաքել հիմնարար գիտելիքներ նախագծման տեսության, մեթոդների և նախագծային տարբեր փուլերի հետ կապված գործառնությունների վերաբերյալ,</p> <p>Ա3. արտահայտել համաշխարհային և ազգային ճարտարապետության, քաղաքաշինության (տարածական պլանավորման), լանդշաֆտային ճարտարապետության, մշակութային ժառանգության պահպանության, արվեստի պատմության, տեսության և պրակտիկայի իմացություն,</p> <p>Ա4. սահմանել էկոլոգիական կայունության և բնական ու տեխնաձին ազդեցություններից պաշտպանության իմացություն՝ հաշվի առնելով բնական աղետների առաջացման ռիսկերը,</p> <p>Ա5. նկարագրել ճարտարապետական պրակտիկային և ստեղծագործությանը բնորոշ հետազոտությունները և փորձերը՝ դիտարկելով ճարտարապետու-</p>	<p>1.1.Դրսևորում է մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների իմացություն և առաջադեմ գիտելիք:</p>

		<p>թյունը որպես ստեղծագործական ուղղություն,</p> <p>Ա6. արտահայտել գիտելիքներն աշխատանքային նախագծերի, շինարարական արտադրության, կոնստրուկցիաների, շինանյութերի, շինարարության մեթոդների և կազմակերպման, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների, տեխնիկական սպասարկման և անվտանգության համակարգերի ոլորտներում,</p> <p>Ա7. ձևակերպել ճարտարապետության հետ հարակից ակադեմիական ոլորտների փոխազդեցությունները,</p> <p>Ա8. ներկայացնել, թե ինչպես է ճարտարապետությունը գործում որպես մասնագիտություն և որպես ստեղծարար արդյունաբերություն,</p> <p>Ա9. նկարագրել ճարտարապետությունը որպես մասնագիտության, ֆինանսական, գործարար և իրավական հիմնական ասպեկտներ,</p> <p>Ա10. արտահայտել անալիտիկ և ինժեներական մտածելակերպ ստեղծագործական աշխատանքների մեջ:</p>	
<p>Կ Ա Ր Ո Ղ ՈԻ Թ Յ</p>	<p><b>2.Գիտելիքի ու իմացության կիրառում</b></p> <hr/> <p><b>3.Հաղորդակցման, S2S և տվյալների հետ աշխատելու</b></p>	<p><b>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <p>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Բ1. հետազոտել, մշակել և մեկնաբանել ոլորտին վերաբերող քանակական և որակական տվյալներ՝ տրամաբանական հիմնավորումներ, նախագծային ու շինարարական գործընթացների գնահատումներ իրականացնելու համար,</p> <p>Բ2. համատեղել մայրենի և առնվազն մեկ օտար լեզվով</p>	<p>2.1.Կարող է կիրառել ձեռք բերած գիտելիքը և իմացությունը, ոլորտի հիմնարար սկզբունքները և մեթոդները՝ մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ընթացքում ծագած խնդիրները լուծելու համար:</p> <hr/> <p>3.1.Կարող է մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնել և բացատրել տվյալ ոլորտին առնչվող տեղեկատվություն, փաստար-</p>



<p>ՈՒՆԵՐ</p>	<p><b>կարողություններ</b></p>	<p>հաղորդակցվելու ունակությունը՝ նախագծերի, ինչպես նաև մասնագիտության ոլորտին առնչվող խնդիրների քննարկումների ժամանակ՝ տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր, և որոշումներ ներկայացնելու, բացատրելու կարողություն ինչպես մասնագետների, այնպես էլ հանրության առջև,</p> <p>F3. համատեղել նախագծի մշակման և նախագծային լուծումների ներկայացման գործընթացի կիրառումը, ինչպես ձեռքի աշխատանք, այնպես էլ էլեկտրոնային և գրաֆիկական մեթոդներ ներկայացնելու համար՝ օգտագործելով արդիական ծրագրային փաթեթներ,</p> <p>F4. գնահատել միջանձնային հաղորդակցման հմտությունները և էթիկական պարտավորությունները,</p> <p>F5. արժևորել ճարտարապետական ստեղծագործության վրա աշխատելիս ճարտարապետների, ինչպես նաև այլ ոլորտների մասնագետների հետ համատեղ աշխատելու ունակությունը և ապահովել արդյունավետ հաղորդակցում,</p> <p>F6. կիրառել իր ներդրումն գործողությունների կամ նախագծերի իրականացման և կառավարման գործում՝ լինելով բաց և հաղորդակցվող:</p>	<p>կներ, գաղափարներ, խնդիրներ և դրանց լուծումները:</p> <p>3.2. Կարող է կիրառել S2S-ներ մասնագիտական ոլորտում խնդիրներ լուծելու և աշխատանքն արագացնելու համար:</p> <p>3.3. Կարող է հավաքագրել, մշակել, վերլուծել և մեկնաբանել մասնագիտական ոլորտին առնչվող քանակական և որակական տվյալներ՝ հիմնավորված դատողություններ անելու համար:</p>
	<p><b>4.Ընդհանրական իմացական կարողություններ (ներառյալ դատողություններ անելը)</b></p>		<p>4.1. Կարող է վերլուծել և անել եզրահանգումներ՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերել ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:</p>
<p>ՀՄՏ ՈՒԹ</p>	<p><b>5.Ինքնուրույնություն և պատասխանատվություն (ներառյալ սովորելու կարողությունները)</b></p>	<p><b>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</b></p> <p>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Գ1. մեկնաբանել այն սոցիալական ենթատեքստի իմացությունը, որի շրջանակներում նախատեսվում է ձևավորել ճարտարապետական միջավայրը,</p>	<p>5.1. Կարող է ծավալել լիարժեք մասնագիտական գործունեություն, կառավարել մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, կայացնել ինքնուրույն որոշումներ:</p> <p>5.2. Կարող է կառավարել աշխատանքային թիմ և պա-</p>

<p>Յ ՈՒ Ն</p>		<p>հաշվի առնելով էրգոնոմիկայի և ծավալատարածական պահանջները, ինչպես նաև սոցիալական արդարությունը, բոլորի համար հասանելիությունը,</p> <p>Գ2. համակարգել իր ճարտարապետական կրթության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները,</p> <p>Գ3. ցուցաբերել իր ճարտարապետական ստեղծարար պրակտիկայում փորձարկումներ իրականացնելու և անկանխատեսելի իրավիճակների հաղթահարման ունակություն,</p> <p>Գ4. համակարգել իր ճարտարապետական գիտելիքների զարգացման համար անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունն, ապահովել և կիրառել այդ գիտելիքները ստեղծարար ճարտարապետական նախագծման գործընթացներում,</p> <p>Գ5. սինթեզել քննադատական ձևակերպման, ստեղծագործական մշակման և իր սեփական ճարտարապետական հայեցակարգերը, տարածական ձևերի առաջադեմ հմտությունները,</p> <p>Գ6. օգտագործելով հիմնարար, արդիական և նորարարական մեթոդներ՝ ձևակերպել և պլանավորել մասնագիտական գործունեության տարբեր փուլերի գործընթացները՝ հիմնվելով քաղաքաշինության, ճարտարապետության, շինարարության, անվտանգության տեխնիկայի և շահագործման իրավական ակտերի, ինչպես նաև նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների վրա,</p>	<p>տասխանատվություն ստանձնել նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p>5.3. Ունակ է բացահայտելու իր կրթական պահանջմունքները և (կամ) կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:</p> <p>5.4. Ունակ է ստանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը և ազգային ու համամարդկային արժեքների տարածմանը:</p>
-----------------------	--	--	---

		Գ7. դասակարգել օբյեկտների գործառական նշանակության ու մասշտաբի, մարդկանց և կառույցների, շրջակա միջավայրի միջև առկա կապերը:	
Աշխատածավալը ECTS կրեդիտներով		240	240

**073101.01.6 - ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ**

**Ծրագրի կրթական վերջնարդյունքները**

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն	Բ. Գործնական մասնագիտական կարողություններ
<p>Ա1. Ճանաչել ճարտարապետական ստեղծագործության հիմքում ընկած գործընթացները, հայեցակարգերը և մշակութային արժեքների վերաբերյալ խորը գիտելիքները,</p>	<p>Բ1. հետազոտել, մշակել և մեկնաբանել ոլորտին վերաբերող քանակական և որակական տվյալներ՝ տրամաբանական հիմնավորումներ, նախագծային ու շինարարական գործընթացների գնահատումներ իրականացնելու համար,</p>
<p>Ա2. հավաքել հիմնարար գիտելիքներ նախագծման տեսության, մեթոդների և նախագծային տարբեր փուլերի հետ կապված գործառույթների վերաբերյալ,</p>	<p>Բ2. համատեղել մայրենի և առնվազն մեկ օտար լեզվով հաղորդակցվելու ունակությունը՝ նախագծերի, ինչպես նաև մասնագիտության ոլորտին առնչվող խնդիրների քննարկումների ժամանակ՝ տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր, և որոշումներ ներկայացնելու, բացատրելու կարողություն ինչպես մասնագետների, այնպես էլ հանրության առջև,</p>
<p>Ա3. արտահայտել համաշխարհային և ազգային ճարտարապետության, քաղաքաշինության (տարածական պլանավորման), լանդշաֆտային ճարտարապետության, մշակութային ժառանգության պահպանության, արվեստի պատմության, տեսության և պրակտիկայի իմացություն,</p>	<p>Բ3. համատեղել նախագծի մշակման և նախագծային լուծումների ներկայացման գործընթացի կիրառումը, ինչպես ձեռքի աշխատանք, այնպես էլ էլեկտրոնային և գրաֆիկական մեթոդներ ներկայացնելու համար՝ օգտագործելով արդիական ծրագրային փաթեթներ,</p>
<p>Ա4. սահմանել էկոլոգիական կայունության և բնական ու տեխնածին ազդեցություններից պաշտպանության իմացություն՝ հաշվի առնելով բնական աղետների առաջացման ռիսկերը,</p>	<p>Բ4. գնահատել միջանձնային հաղորդակցման հմտությունները և էթիկական պարտավորությունները,</p>
<p>Ա5. նկարագրել ճարտարապետական պրակտիկային և ստեղծագործությանը բնորոշ հետազոտությունները և փորձերը՝ դիտարկելով ճարտարապետությունը որպես ստեղծագործական ուղղություն,</p>	<p>Բ5. արժևորել ճարտարապետական ստեղծագործության վրա աշխատելիս ճարտարապետների, ինչպես նաև այլ ոլորտների մասնագետների հետ համատեղ աշխատելու ունակությունը և ապահովել արդյունավետ հաղորդակցում,</p>
<p>Ա6. արտահայտել գիտելիքներն աշխատանքային նախագծերի, շինարարական արտադրության, կոնստրուկցիաների, շինանյութերի, շինարարության մեթոդների և կազմակերպման, ինժեներ-</p>	<p>Բ6. կիրառել իր ներդրումն գործողությունների կամ նախագծերի իրականացման և կառավարման գործում՝ լինելով բաց և հաղորդակցվող:</p>

	րատրանսպորտային ենթակառուցվածքների, տեխնիկական սպասարկման և անվտանգության համակարգերի ոլորտներում,		
Ա7.	ձևակերպել ճարտարապետության հետ հարակից ակադեմիական ոլորտների փոխազդեցությունները,		
Ա8.	ներկայացնել, թե ինչպես է ճարտարապետությունը գործում որպես մասնագիտություն և որպես ստեղծարար արդյունաբերություն,		
Ա9.	նկարագրել ճարտարապետությունը որպես մասնագիտության, ֆինանսական, գործարար և իրավական հիմնական ասպեկտներ,		
Ա10.	արտահայտել անալիտիկ և ինժեներական մտածելակերպ ստեղծագործական աշխատանքների մեջ:		
<b>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</b>			
Գ1.	մեկնաբանել այն սոցիալական ենթատեքստի իմացությունը, որի շրջանակներում նախատեսվում է ձևավորել ճարտարապետական միջավայրը, հաշվի առնելով էրգոնոմիկայի և ծավալատարածական պահանջները, ինչպես նաև սոցիալական արդարությունը, բոլորի համար հասանելիությունը,	Գ5.	սինթեզել քննադատական ձևակերպման, ստեղծագործական մշակման և իր սեփական ճարտարապետական հայեցակարգերը, տարածական ձևերի առաջադեմ հմտությունները,
Գ2.	համակարգել իր ճարտարապետական կրթության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները,	Գ6.	օգտագործելով հիմնարար, արդիական և նորարարական մեթոդներ՝ ձևակերպել և պլանավորել մասնագիտական գործունեության տարբեր փուլերի գործընթացները՝ հիմնվելով քաղաքաշինության, ճարտարապետության, շինարարության, անվտանգության տեխնիկայի և շահագործման իրավական ակտերի, ինչպես նաև նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների վրա,
Գ3.	ցուցաբերել իր ճարտարապետական ստեղծարար պրակտիկայում փորձարկումներ իրականացնելու և անկանխատեսելի իրավիճակների հաղթահարման ունակություն,	Գ7.	դասակարգել օբյեկտների գործառական նշանակության ու մասշտաբի, մարդկանց և կառույցների, շրջակա միջավայրի միջև առկա կապերը:
Գ4.	համակարգել իր ճարտարապետական գիտելիքների զարգացման համար անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունն, ապահովել և կիրառել այդ գիտելիքները ստեղծարար ճարտարապետական նախագծման գործընթացներում,		

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																								
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Ա8	Ա9	Ա10	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Գ6	Գ7		
Հայոց քաղաքական պատմություն	6ՃՏՊ004, 6ՃՏՊ005							+											+							
Փիլիսոփայություն	6ՀՕԼ001, 6ՀՕԼ 002																		+		+					
Հայոց լեզու և խոսքի մշակույթ	6ՀՕԼ001, 6ՀՕԼ002														+		+				+					
Ռուսաց լեզու	6ՀՕԼ003, 6ՀՕԼ004															+		+				+				
Օտար լեզու	6ՀՕԼ032/33															+		+				+				
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր	6ԳԷԿ006				+															+		+				
Բնապահպանության հիմունքներ	6ԳԷԿ005				+															+		+				
Ֆիզիկական դաստիարակություն																										
Բարձրագույն մաթեմատիկա	ՄԱԹ001											+	+				+					+				
Ճարտարապետական ֆիզիկա /լուսատեխնիկա/	ՃՆԽ001								+	+								+				+				
Ճարտարապետական ֆիզիկա /ակուստիկա/	ՃՆԽ002									+	+								+				+			
Ճարտարապետական ֆիզիկա /կլիմայաբանություն/	ՃՆԽ058										+	+								+			+			
Տեսական մեխանիկա	ՏՄԽ001											+										+				
Համակարգչային գրաֆիկա	ԳՀԳ005, 6ԳՀԳ012								+	+										+			+			
Շինարարական մեխանիկա	ՇՄԽ006																					+				
Նյութերի դիմադրություն	ՆԹԴ001																					+				
Ե/Բ, քարե, մետաղե և փայտե կոնստրուկցիաներ	ՇԻԿ001, ՇԻԿ002, ՇԻԿ002Ա									+	+											+	+			







Լանդշաֆտ և ճարտարապետություն	ՔՇՆ002			+		+													+	+	+				
Տարածքների ինժեներական բարեկարգում և տրանսպորտ	ՔՇՆ020, ՔՇՆ020Ա			+			+	+						+						+	+	+			
Պատմական միջավայրի վերակառուցում և հուշարձանի վերականգնում	ՃՏՊ158, ՃՏՊ0158Ա	+	+	+								+		+						+	+	+			
Քաղաքաշինության հիմունքներ	ՔՇՆ012		+	+		+											+			+	+	+			
Էրզոնումիկայի հիմունքներ	ՃՆԽ019		+														+			+	+	+	+		
Ուսումնական (1 շաբաթ նկարչական, 1 շաբաթ գեղեցիկական)	6ԳԳՔ020, ԳԴԶ053												+							+					
Ուսումնական (չափագրական)	ՃՏՊ049			+									+				+			+					
Արտադրական (1 շաբաթ շինարարական, 2 շաբաթ նախագծային)	ՇԱՏ019, ՃՆԽ045						+							+						+	+				
Նախաավարտական	ՃՆԽ046 ՃՏՊ050, ՔՇՆ015	+	+			+								+						+	+				
Ավարտական աշխատանք	ՃՆԽ049 ՃՏՊ052 ՔՇՆ017	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+





